ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

Սույնով տալիս եմ իմ համաձայնությունը «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ին, նրա անձանց խմբին (այսուհետ՝ Քեյ-Փի-Էմ-Ջի) իմ անձնական տվյալների մշակմանը (ներառյալ՝ ինձնից և/կամ ցանկացած երրորդ անձանցից տվյալների ստացմանը) և հաստատում եմ, որ սույն համաձայնությունը տրամադրելիս գործում եմ կամավոր:

Սույն համաձայնությունը տարածվում է հետևյալ տվյալների վրա՝ իմ անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, օրը, հասցեն, ընտանեկան կարգավիճակը, բոլոր տեսակի եկամուտները, կրթությունը, մասնագիտությունը, կենսագրական տվյալները, դատական վարույթների վերաբերյալ տվյալները, աշխատանքի վայրերի վերաբերյալ տվյալները, ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները, կոնտակտային տվյալները, լուսանկարը, իմ CV- ում, մոտիվացիոն նամակում արտացոլված տվյալները, ինչպես նաև իմ անձին վերաբերող ցանկացած այլ տեղեկատվությունը, որը հասանելի կամ հայտնի է Քեյ-Փի-Էմ-Ջի-ին որոշակի պահին (այսուհետ՝ Անձնական տվյալներ):

Սույն համաձայնությունը տրվում է իմ Անձնական տվյալների հետ կապված ցանկացած գործողություն կատարելու համար, որը պահանջվում է կամ ցանկալի է ստորև ներկայացված նպատակներն ապահովելու համար, ներառյալ, սակայն չսահմանափակվելով հետևյալ գործողություններով՝ Անձնական տվյալների հավաքում, համակարգում, դասակարգում կուտակում, պահպանում, վերափոխում (թարմացում, փոփոխություն), օգտագործում, տարածում (այդ թվում՝ փոխանցում, մասնավորապես, միջսահմանային), ապանձնավորում, ուղեփակում կամ ոչնչացում, ինչպես նաև իմ Անձնական տվյալների հետ կապված ցանկացած այլ գործողությունների իրականացում՝ հաշվի առնելով գործող օրենսդրության դրույթները:

Համաձայնություն եմ տալիս իմ անձնական տվյալների մշակմանը հետևյալ նպատակների իրագործման համար՝

- Քեյ-Փի-Էմ-Ջի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, ինչպես նաև թափուր աշխատատեղեր ունեցող KPMG անկախ ընկերությունների ցանցի անդամ այլ ընկերություններում աշխատանքի տեղավորումը խթանելու նպատակով (ներառյալ, անհրաժեշտության դեպքում, միգրացիոն ծառայություններ. վիզայի ապահովում, անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանությունները օտար լեզուների/օտար լեզուներից և այլն),
- Ներառում KPMG կադրերի ռեզերվում (KPMG տվյալների շտեմարան, որը պարունակում է թափուր հաստիքների համար դիմած անձանց վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում նաև՝ անձնական տվյալներ):

Անձնական տվյալների մշակումը KPMG-ն իրականացնում է հետևյալ հիմնական մեթոդներով (բայց չսահմանափակվելով). Պահեստավորում, ձայնագրում էլեկտրոնային պահոցներում և դրանց պահում, պիտակավորում, անձնական տվյալների զանազան մշակում (ավտոմատացված և ոչ ավտոմատացված):

Սույնով ես համաձայնվում եմ նաև, որ վերը նշված նպատակներին հասնելու համար իմ անձնական տվյալները կարող են փոխանցվել (պայմանով, որ գաղտնիությունը և անձնական տվյալների պաշտպանությունը պահպանվում է մշակման ընթացքում) այլ KPMG International Cooperative, Շվեյցարական ընկերության հետ փոխկապակցված KPMG ցանցի անկախ անդամ-ընկերությունների անդամ հանդիսացող ընկերություններին: KPMG անկախ անդամ-ընկերությունների ցանցի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս www.kpmg.com

Ձեր վերաբերյալ տվյալների հստակեցման կամ ձեռքբերման նպատակով, կարող են կատարվել այլ կազմակերպություններին ուղղված (այդ թվում նաև Ձեր նախկին աշխատանքի վայրեր) հարցումներ,

© 2020 Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՍՊԸ, Բոլոր իրավունքները պաշտպանված են

որի դեպքում հարցումների հասցեատերեր հանդիսացող կոնտակտային անձանց անձնական տվյալների մշակման համաձայնության ձեռքբերման պատասխանատվությունը կրում եք Դուք:

Սույնով հաստատում եմ նաև, որ տեղեկացված եմ հետևյալ դրույթների մասին՝

— Անձնական տվյալների մշակման համաձայնությունը կարող է հետ կանչվել Անձնական տվյալների սուբյեկտի կողմից դրա գործողության ժամկետի ցանկացած պահին՝ գրավոր դիմում ներկայացնելու միջոցով: Եթե Անձնական տվյալների սուբյեկտը հետ է կանչում Անձնական տվյալների մշակմանը տրված իր համաձայնությունը, օպերատորը պարտավոր է դադարեցնել Անձնական տվյալների մշակումը և ոչնչացնել Անձնական տվյալները հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե դա արգելված չէ օրենսդրությամբ: Անձնական տվյալների ոչնչացման մասին օպերատորը տեղեկացնում է Անձնական տվյալների սուբյեկտին ոչնչացման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

— Սույն համաձայնությունը տրված է անսահմանափակ ժամկետով և կիրառելի է այնքան ժամանակ, որքան նախատեսված է օրենսդրությամբ կամ անհրաժեշտ է բիզնեսի նպատակների համար:

© 2020 Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՍՊԸ, Բոլոր իրավունքները պաշտպանված են